ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 033

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն, 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշումները՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

1. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող.
1.1 գյուղատնտեսական նշանակության 0.23819 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-006-0251-, գործառնական նշանակությունը՝ այլ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ կորիզավոր պտղատու այգի գործառնական նշանակության,
1.2 գյուղատնտեսական նշանակության 0.19265 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-006-0251-, գործառնական նշանակությունը՝ այլ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ վարելահող գործառնական նշանակության,
1.3 գյուղատնտեսական նշանակության 0.10851 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-006-0328-, գործառնական նշանակությունը՝ այլ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ վարելահող գործառնական նշանակության,
1.4 գյուղատնտեսական նշանակության 0.19201 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-006-0329-, գործառնական նշանակությունը՝ այլ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ վարելահող գործառնական նշանակության,
1.5 գյուղատնտեսական նշանակության 0.05556 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-006-0254-, գործառնական նշանակությունը՝ արոտ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ խաղողի այգի գործառնական նշանակության,
1.6 գյուղատնտեսական նշանակության 1.78307 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-006-0283-) հողամասից 1.08367հա (գործառնական նշանակությունը՝ այլ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ խոտհարք գործառնական նշանակության,
1.7 գյուղատնտեսական նշանակության 0.38023 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-006-0328-, գործառնական նշանակությունը՝ արոտ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ վարելահող գործառնական նշանակության,

1.8 գյուղատնտեսական նշանակության 0.40788 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-006-0328-, գործառնական նշանակությունը՝ արոտ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ վարելահող գործառնական նշանակության,

1.9 գյուղատնտեսական նշանակության 4.91524 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-006-0276-0001, գործառնական նշանակությունը՝ այլ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ վարելահող գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 034

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի պահանջով, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

1. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող.
1.1 գյուղատնտեսական նշանակության 0.23819 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-006-0251-, գործառնական նշանակությունը՝ կորիզավոր պտղատու այգի) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն,
1.2 գյուղատնտեսական նշանակության 0.19265 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-006-0251-, գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն,
1.3 գյուղատնտեսական նշանակության 0.10851 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-006-0328-, գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն,
1.4 գյուղատնտեսական նշանակության 0.19201 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-006-0329-, գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն,
1.5 գյուղատնտեսական նշանակության 0.05556 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-006-0254-, գործառնական նշանակությունը՝ խաղողի այգի) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն,
1.6 գյուղատնտեսական նշանակության 1.78307 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-006-0283-, 1.08367հա-ի գործառնական նշանակությունը՝ խոտհարք, 0.69940հա-ի գործառնական նշանակությունը վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն,
1.7 գյուղատնտեսական նշանակության 0.38023 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-006-0328-, գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն,
1.8 գյուղատնտեսական նշանակության 0.40788 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-006-0328-, գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն,
1.9 գյուղատնտեսական նշանակության 4.91524 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-006-0276-0001, գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 035

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՃՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.19845ՀԱ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2011թվականի թիվ 1918-Ն, Արենի համայնքի ավագանու 12.02.2020թվականի թիվ 11 որոշումները՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է***՝

Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.19845հա արտադրական նշանակության հողամասի (ծածկագիրը՝ 10-006-0029-0039) նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 036

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.19845 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0,19845 հա բնակավայրերի նպատակային նշանակության հողամասին (ծածկագիրը՝ 10-006-0029-0039, գործառնական նշանակությունը՝ ընդհանուր օգտագործման) տալ հետևյալ հասցեն՝ Արենի համայնք, Աղավնաձոր բնակավայր, 2 փողոց, 1 փակուղի, թիվ 4:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 037

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն, 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշումները՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող.
1.1 գյուղատնտեսական նշանակության 0.03177 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-008-0101-, գործառնական նշանակությունը՝ արոտ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ վարելահող գործառնական նշանակության,
1.2 գյուղատնտեսական նշանակության 0.06604 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-008-0101-, գործառնական նշանակությունը՝ արոտ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ վարելահող գործառնական նշանակության,
1.3 գյուղատնտեսական նշանակության 5.01742 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-008-0101-, գործառնական նշանակությունը՝ արոտ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ վարելահող գործառնական նշանակության,
2. Արենի համայնքի Չիվա բնակավայրի վարչական սահմաններում գտնվող.

2.1 գյուղատնտեսական նշանակության 0.73342 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-036-0104-, գործառնական նշանակությունը՝ արոտ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ վարելահող գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 038

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի պահանջով, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող.
1.1 գյուղատնտեսական նշանակության 0.03177 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-008-0101-, գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն,
1.2 գյուղատնտեսական նշանակության 0.06604 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-008-0101-, գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն,

1.3 գյուղատնտեսական նշանակության 5.01742 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-008-0101-, գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն
1.4. գյուղատնտեսական նշանակության 40.0000 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-008-0265-0062, գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն
1.5. գյուղատնտեսական նշանակության 0.52880 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-008-0265-, գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն
2. Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող.
2.1 գյուղատնտեսական նշանակության 1.21595 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-004-0149-, գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն,
3. Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական սահմաններում գտնվող.
3.1 գյուղատնտեսական նշանակության 0.54226 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-020-0142-, գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն,

4. Արենի համայնքի Չիվա բնակավայրի վարչական սահմաններում գտնվող.

4.1 գյուղատնտեսական նշանակության 0.55500 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-036-0102-, գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն,

4.2 գյուղատնտեսական նշանակության 0.73342 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-036-0104-, գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն,

4.3 գյուղատնտեսական նշանակության 0.18060 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-037-0111-, գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն,

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 039

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ՝ ԳՆԵԼ ՊԱՐԳԵՎԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ, ԱՆՈՒՇ ԳԱՌՆԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ, ՊԱՐԳԵՎ ԳՆԵԼԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵՎ ԳՈՀԱՐ ԳՆԵԼԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0.041 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-510-Ն,26.12.2002թ.) 7-րդ հոդվածի պահանջներով, Արենի համայնքի ղեկավարը *որոշում է՝*

1. Ճանաչել Արենի համայնքի Արենի բնակավայրի բնակիչներ՝ Գնել Պարգևի Սարգսյանի, Անուշ Գառնիկի Սարգսյանի, Պարգև Գնելի Սարգսյանի և Գոհար Գնելի Սարգսյանի սեփականության իրավունքը Արենի համայնքի Արենի բնակավայրում գտնվող, փաստացի օգտագործվող 0.041 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:

2. Գնել Սարգսյանի և նրա ընտանիքի կողմից ավել օգտագործվող 0.041 հա բնակավայրերի նշանակության հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և այդ իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 040

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 2 ՓՈՂՈՑ, 1 ՓԱԿՈՒՂԻ, ԹԻՎ 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.19845 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 3-րդ հոդվածի պահանջով, Արենի համայնքի ղեկավարը *որոշում է՝*

Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի 2 փողոց, 1 փակուղի, թիվ 4 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության 0.19845 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-006-0029-0039, գործառնական նշանակությունը՝ ընդհանուր օգտագործման) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 041

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի, 34-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 42-րդ հոդվածի, առաջին մասի 8-րդ կետերի, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի առաջին մասի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի և 26-րդ հոդվածի վերջին պարբերության պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

1. Սույն որոշման հավելվածում նշված անձանց նկատմամբ հարուցել վարչական վարույթ:
2. Արենիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշման հավելվածում նշված անձանց վարչական վարույթի գործի քննության համար հրավիրել Արենիի համայնքապետարան (ժամկետները նշված են հավելվածում):
3. Սույն որոշման մասին օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել հավելվածում նշված անձանց:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 042

ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ՍՎԵՏԼԱՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԵՎ ՀԱՅԿ ՈՍԿԱՆՅԱՆԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 101-րդ հոդվածի 4-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքացիներ Սվետլանա Մանուկյանի և Հայկ Ոսկանյանի դիմումները՝ ***որոշում եմ.***

1. Լուծել նախկին Արենիի համայնքապետարանի և քաղաքացի Սվետլանա Սպարտակի Մանուկյանի մեջև կնքված 08.06.2004 թվականի թիվ 634, 0.095 հա մակերեսով հողամասի (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող) վարձակալության պայմանագիրը:

2. Լուծել նախկին Արենիի համայնքապետարանի և քաղաքացի Հայկ Հազոյի Ոսկանյանի մեջև կնքված 08.06.2004 թվականի թիվ 669, 0.09 հա մակերեսով հողամասի (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող) վարձակալության պայմանագիրը:

3. Լուծել նախկին Արենիի համայնքապետարանի և քաղաքացի Հայկ Հազոյի Ոսկանյանի մեջև կնքված 08.06.2004 թվականի թիվ 670, 0.136 հա մակերեսով հողամասի (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող) վարձակալության պայմանագիրը:

4. Լուծել նախկին Արենիի համայնքապետարանի և քաղաքացի Հայկ Հազոյի Ոսկանյանի մեջև կնքված 08.06.2004 թվականի թիվ 672, 0.15 հա մակերեսով հողամասի (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող) վարձակալության պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 043

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԷԼԲՐՈՒՍ ԲԱԲԿԵՆԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻՆ, ՀԱՍՄԻԿ ՔԱՋԻԿԻ ԲԱԲԱՅԱՆԻՆ, ՎԱՉԻԿ ԷԼԲՐՈՒՍԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻՆ, ՎԱՀԵ ԷԼԲՐՈՒՍԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻՆ ԵՎ ՆԱԻՐԱ ԷԼԲՐՈՒՍԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻՆ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն, որոշումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Արենի համայնքի վարչական սահմաններում գտնվող Էլբրուս Բաբկենի Սողոմոնյանին, Հասմիկ Քաջիկի Բաբայանին, Վաչիկ Էլբրուսի Սողոմոնյանին, Վահե Էլբրուսի Սողոմոնյանին և Նաիրա Էլբրուսի Սողոմոնյանին համասեփականության իրավունքով պատկանող 0.21222հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0107-0006, գործառնական նշանակությունը՝ վարելահող) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ Խաղողի այգի գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 044

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՔԱՂԱՔԱՑՆԵՐ ԱՐԱՄԱՅԻՍ ՆՈՐԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԵՎ ՌՈՒԶԱՆՆԱ ԱՂԱՍԻՆԻ ԲԱԲԱՅԱՆԻՆ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը և հիմք ընդունելով քաղաքացի Արամայիս Հակոբյանի դիմումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացիներ Արամայիս Նորիկի Հակոբյանին և Ռուզաննա Աղասինի Բաբայանին համասեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 0.818 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-006-0328-0050, գործառնական նշանակությունը՝ խոտհարք) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ խաղողի այգի գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 045

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 18 հոկտեմբերի 2019 թվականի թիվ 106 և 12 փետրվարի 2020 թվականի թիվ 12 որոշումները՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Լոտ 1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.0035 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-008-0048-0006, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման) հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով՝ 17.955 ՀՀ դրամ:

Լոտ 2. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.00426 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-008-0191-0017, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման) հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով՝ 21.854 ՀՀ դրամ:

Լոտ 3. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.44351 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-008-0154-0016, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ ջրովի վարելահող) հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով՝ 761.730 ՀՀ դրամ:

Լոտ 4. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող.

4.1) 0.27174 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-008-0101-0124, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ ջրովի

վարելահող) հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով՝ 115.150 << դրամ:

4.2) 0.17699 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-008-0101-0125, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ ջրովի վարելահող) հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով՝ 75.000 << դրամ:

4.3) 0.25971 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-008-0125-0009, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ ջրովի վարելահող) հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 120%-ի չափով՝ 88.420 << դրամ:

Լոտի ընդհանուր չափը կազմում է՝ 0.70844 հա, արժեքը՝ 278.192 << դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 046

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 12.02.2020 թվականի թիվ 12 որոշումը, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է***՝

Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից տրամադրել վարձակալության.

Հողավանդակ N1.

Խաչիկ բնակավայրի վարչական սահմանում գտնվող 2.2174 հա հողամասը (ծածկագիրը՝ 10-025-0106-0010, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ ընդերքի օգտագործման) մրցույթով, 5 տարի ժամկետով, վարձակալությամբ հատկացնելու համար: Հողամասի մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 1 %-ից ոչ պակաս՝ 5.000.000 ՀՀ դրամ՝ մեկ տարվա համար:

Հողավանդակ N2.

Չիվա բնակավայրի վարչական սահմանում գտնվող 0.35 հա հողամասը (ծածկագիրը՝ 10-036-0110-0016, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող) մրցույթով, 5 տարի ժամկետով, վարձակալությամբ հատկացնելու համար: Հողամասի մեկնարկային գինը սահմանել հողի հարկի տարեկան դրույքաչափից ոչ պակաս՝ 3.500 ՀՀ դրամ՝ մեկ տարվա համար:

Հողավանդակ N3.

Չիվա բնակավայրի վարչական սահմանում գտնվող 1.3 հա հողամասը (ծածկագիրը՝ 10-037-0110-0010, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող) մրցույթով, 5 տարի ժամկետով, վարձակալությամբ հատկացնելու համար: Հողամասի մեկնարկային գինը սահմանել հողի հարկի տարեկան դրույքաչափից ոչ պակաս՝ 13.500 ՀՀ դրամ՝ մեկ տարվա համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 047

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 36 ՓՈՂՈՑ, 32 ՇԵՆՔ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԿՈՍԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արենի համայնքի ղեկավարը, քննության առնելով 14 հունվարի 2020 թվականի Արենի համայնքի ղեկավարի թիվ 005 որոշմամբ հարուցված վարչական գործը, այն է՝ Արենի համայնքի Արենի բնակավայրի 36 փ., 32 շենք հասցեում գտնվող, Արթուր Մարկոսի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող հողատարածքում ինքնակամ շինություն կառուցելու վերաբերյալ վարչական իրավախախտման հարցը՝ պարզեց որ.

Արթուր Մարկոսի Մկրտչյանը (Բնակության հասցեն՝ Արենի համայնք, գ.Արենի, 16 Փ. 21), Արենի համայնքի 36 փողոց, 32 շենքհասցեում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող տարածքում, խախտելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պահանջները, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի, իրականացրել է ապօրինի շինություն, որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, ինչի կապակցությամբ Արենիի համայնքապետարանի «Արենի համայնքի տարածքում ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների, ապօրինի հողօգտագործումների հայտնաբերման, կանխարգելման և կասեցման կամ օրենքով սահմանված կարգով դրանց առաջացրած հետևանքների վերացման նպատակով մշտական հանձնաժողովի» 13.01.2020թ. թիվ 1 արձանագրության հիման վրա 2020 թվականի փետրվարի 10-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Արենիի համայնքապետարանի «Արենի համայնքի տարածքում

վարչական իրավախախտումներ հայտնաբերելու և պատասխանատու անձանց (սուբյեկտների) վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով ստեղծված հանձնաժողովը հրավիրել և անցկացրել է լսում Արթուր Մարկոսի Մկրտչյանի մասնակցությամբ:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

1. Արենի համայնքի վարչական տարածքում գտնվող շենք-շինությունների, ճանապարհների և փողոցների հերթական ուսումնասիրության ժամանակ Արենիի համայնքապետարանի «Արենի համայնքի տարածքում ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների, ապօրինի հողօգտագործումների հայտնաբերման, կանխարգելման, կասեցման և օրինականացման, կամ օրենքով սահմանված կարգով դրանց առաջացրած հետևանքների վերացման նպատակով մշտական հանձնաժողովի» կողմից Արենի համայնքի Արենի բնակավայրի 36 փողոց 32 շենք հասցեում գտնվող հողատարածքում հայտնաբերված ինքնակամ շինության կապակցությամբ 13.01.2020թ. թիվ 1 նիստի թիվ 1 արձանագրությունը:

2. Հանձնաժողովի 10.02.2020թ. ԱՀՎԿ01/20 նիստի թիվ 1 արձանագրությունը:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, հաստատված եմ համարում հետևյալը՝

Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ.Արենի, 16 Փ., 21 տան բնակիչ Արթուր Մարկոսի Մկրտչյանի կողմից Արենի համայնքի Արենի բնակավայրի 36 փողոց 32 շենք հասցեում գտնվող, իրեն սեփականության իրավունքով պատկանող հողատարածքում, առանց համապատասխան թույլտվության, իրականացվել է ինքնակամ շինության շինարարական աշխատանքներ, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի, ուստի կարող ենք հաստատված համարել, որ քննարկվող շինությունը հանդիսանում է ինքնակամ կառույց:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով 2020 թվականի հունվարի 14-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Արենիի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2020թ. փետրվարի 10-ին հրավիրվել է լսում , որին մանակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք՝ առձեռն ծանուցում/ Արթուր Մարկոսի Մկտրչյանը:

Վերջինս մասնկացելով վարչական վարույթի լսումներին հայտնել է, որ չի պատրաստվում վճարել սահմանված տուգանքը, ինչպես նաև հրաժարվել է տալ անձը հաստատող փաստաթուղթը:

Արենի համայնքի տարածքում վարչական իրավախախտումներ հայտնաբերելու և պատասխանատու անձանց (սուբյեկտներին) վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով ստեղծված հանձնաժողովի կողմից վարչական վարույթի գործով ներկայացված բոլոր նյութերը նախապատրաստվել, ուսումնասիրվել և ներկայացվել են համայնքի ղեկավարին:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումները.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը:

Չօրինականացված ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման, իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն քաղաքային և գյուղական համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են՝ կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով՝ հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա.

Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն ինչպես նոր կառուցապատվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում: Շինարարության թույլտվությունը համայնքներում տալիս է համայնքի ղեկավարը Կառավարության սահմանած կարգով:

Տվյալ պարագայում Արթուր Մարկոսի Մկրտչյանը (բնակության հասցեն՝ Արենի համայնք, գ. Արենի, 16Փ., 21) Արենի համայնքի Արենի բնակավայրի 36 փ., 32 շենք հասցեում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող տարածքում առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի /շինարարության թույլտվության/ իրականացրել է ապօրինի՝ ինքնակամ կառույցի շինարարություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ կատարելը, բացառությամբ գյուղական համայնքներում տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված անհատական բնակելի տան՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 4-րդ հոդվածով 44-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով և 23-րդ հոդվածի 1-ին մասով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասի» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

1. Արթուր Մարկոսի Մկրտչյանի նկատմամբ նշանակել տուգանք 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ Արենի համայնքի 36 փողոց, 32 շենք հասցեում գտնվող, իրեն սեփականության իրավունքով պատկանող հողատարածքում ինքնակամ շինություն կառուցելու համար:
2. Սույն որոշմամբ նշանակված տուգանքի վճարման հաշվեհամարն է՝ 900355105066
3. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողության ապահովումը հանձնարարել Արենիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին:
4. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափող անձանց վերաբերյալ տեղեկություններ հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՄԱՐՏԻ 2020թվականի N 048

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՄՐԵԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ, ՓՆՋԻԿ ՍՈՒՐԵՆԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ, ԱԼՎԻՆԱ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ, ԷԴՄՈՆԴ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ, ՄԱՄԲՐԵ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ ԵՎ ՄԱՐԵՏԱ ՄԱՄԲՐԵԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 2008 թ. հունիսի 10-ի ՀՕ-117-Ն օրենքով և հիմք ընդունելով համասեփականատեր Էդմոնդ Անդրանիկի Մաթևոսյանի դիմումը՝ Արենի համայնքի ղեկավարը որոշում է.

1.Ճանաչել Անդրանիկ Մամրեի Մաթևոսյանի (ծվնած 14/01/1950թ), Փնջիկ Սուրենի Մաթևոսյանի (ծվնած 22/02/1957թ), Ալվինա Անդրանիկի Ներսիսյանի (ծվնած 24/08/1977թ), Էդմոնդ Անդրանիկի Մաթևոսյանի (ծվնած 04/09/1978թ), Մամբրե Անդրանիկի Մաթևոսյանի (ծվնած 09/08/1980թ) և Մարետա Մամբրեի Մաթևոսյանի (ծվնած 14/05/1952թ) սեփականության իրավունքը Արենի համայնքի Արենի բնակավայրի 27 փողոց, թիվ 5 հասցեում գտնվող բնակելի տան նկատմամբ:

2.Բնակելի տունը և օժանդակ կառույցները կառուցվել են մինչև 2001 թվականը.

3.Անշարժ գույքը բավարարում է սույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմանները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՄԱՐՏԻ 2020թվականի N 049

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՐԶՈՒՄԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԲԱՐԴՈՒ ԾԱՌԵՐԸ ՀԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 16.11.2018թվականի թիվ 108 որոշումը, <<Արենի համայնքի տարածքում ապօրինի ծառահատումները կանխարգելելու և սանիտարական էտը կանոնակարգելու նպատակով>> ստեղծված հանձնաժողովի թիվ 1 նիստի արձանագրությունը, Արենի համայնքի ղեկավարը *որոշում է*՝

1. Թույլատրել Արենի համայնքի Արփի բնակավայրի բնակիչ Արզուման Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող հողատարածքի հարակից տարածքում կատարել թվով 12 բարդու ծառերի սանիտարական էտ և օգտագործել որպես վառելափայտ:
2. Հատված ծառերի յուրաքանչյուր խորանարդ մետրի համար համայնքապետարանին վճարել վեց հազար ՀՀ դրամ գումար
3. Սույն որոշման կատարման և հսկողության պատասխանատվությունը դնել Արենիի համայնքապետարանի առաջատար մասնագետ Արամ Աթանեսյանի և Արփի բնակավայրի վարչական ղեկավար Գագիկ Հովսեփյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՄԱՐՏԻ 2020թվականի N 050

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՄՐԵԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ, ՓՆՋԻԿ ՍՈՒՐԵՆԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ, ԱԼՎԻՆԱ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ, ԷԴՄՈՆԴ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ, ՄԱՄԲՐԵ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ ԵՎ ՄԱՐԵՏԱ ՄԱՄԲՐԵԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 2008 թ. հունիսի 10-ի ՀՕ-117-Ն օրենքով և հիմք ընդունելով համասեփականատեր Մամբրե Անդրանիկի Մաթևոսյանի դիմումը՝ Արենի համայնքի ղեկավարը որոշում է.

1.Ճանաչել Անդրանիկ Մամրեի Մաթևոսյանի (ծվնած 14/01/1950թ), Փնջիկ Սուրենի Մաթևոսյանի (ծվնած 22/02/1957թ), Ալվինա Անդրանիկի Ներսիսյանի (ծվնած 24/08/1977թ), Էդմոնդ Անդրանիկի Մաթևոսյանի (ծվնած 04/09/1978թ), Մամբրե Անդրանիկի Մաթևոսյանի (ծվնած 09/08/1980թ) և Մարետա Մամբրեի Մաթևոսյանի (ծվնած .14/05/1952թ) սեփականության իրավունքը Արենի համայնքի Արենի բնակավայրի 3 փողոց, 3-րդ նրբ., թիվ 4 հասցեում գտնվող բնակելի տան և օժանդակ կառույցների նկատմամբ:

2.Բնակելի տունը և օժանդակ կառույցները կառուցվել են մինչև 2001 թվականը.

3.Անշարժ գույքը բավարարում է սույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմանները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ